

որին կենդանի և իր առօրեայ կենսական պահանջներին համապատասխանող է համարում, բայց և սկսում է մտածել խմբագրի ծանր նիւթական դրութիւնը թեթեւացնելու միջոցների մասին: Այդ նոր երեւոյթի ինքնատիւր պատկանում է Յարիցիների հայերին:

Մինչև այժմ հայը տալիս էր տարեկան դիցուք 10 ռուբլ, իսկ խմբագիրը համ իր անվարձ աշխատանքն էր տալիս, համ տարեկան 2,000 ռուբլ իր սեփական միջոցներով, համ էլ բաժանում էր իր հրատարակութեան մի հարկեր, զուցէ երկու հարկեր օրինակ ձրիպէս այլ և այլ ազգային դպրոցներին, հայ աշակերտներին, ուսանողներին, վարժապետներին, քահանաներին մէջ...

Այս էր հայի կարծեւոր արդարութիւնը. մինը կրում էր ամբողջ ծանրութիւնը թէ բարոյական և թէ նիւթական կողմից, իսկ միւսը 10 ռուբլ շարտերով, կարծում էր թէ բարեբարութիւն է անում անկող լուսաւորողին:

Բայց հայը չէր հասկանում որ լրագիրը, եթէ պահանջովի հատարակութեան, կարող է դառնալ ոչ թէ միայն մի անձի, այլ ամբողջ հասարակութեան, ամբողջ ազգի օրդան, մոռանում էր որ մի ազգ առանց մայրենի մամուլի արժանի չէ և չէ կարող ազգութիւն կոչվել ինչպէս մի ազգ չէ կարող դպրութիւն ունենալ առանց դպրոցների:

Բայց ժամանակը միշտ տանում է իր յաղթանակը. հայը սկսում է բմբռնել մամուլի պահանջը և այլ ևս ազգի մի անդամ վրա չէ կամենում թողնել ամբողջ նիւթական ծանրութիւնը, այլ ուզում է մասնակցել մի մարդու ոյժից վեր ծախսերի բաժանելու մէջ:

Կա առաջին քայլ է: Մենք դրանով էլ գոհ կը լինենք և այդ ձևով էլ ինչքան կապրենք, ուրախութեամբ կը տանենք դործը, չը նայելով որ հայը բոլորովին այլ

կերպ է պահանջում իր դպրոցները, քան թէ իր մամուլը, չը նայելով որ մենք համոզված ենք թէ լինում են բոլորներ ազգերի կենքի մէջ, երբ ազգի գոյութեան համար մամուլը հազար անգամ աւելի անհրաժեշտ է, քան թէ դպրոցը, չը նայելով որ մենք մեր կենքերում երբեք չենք հասնի այն դրութեանը, որ տեսնենք հայ խմբագիրն իր ամենօրեայ աշխատանքի համար վարձատրված ամենաչնչին ուժիկով, այն ինչ վերջին ծխական դպրոցի վարժապետը քիչ թէ շատ ուժիկ է ստանում իր դաստիարակութեան համար, իսկ կան մեզանում դպրոցներ, որտեղ ուսուցիչները և տեսուչները, համեմատելով ծխական վարժապետի ողորմելի ուժիկի, կամ խմբագրի անտանելի աշխատանքի հետ, ստանում են չորս, հինգ, վեց հազարի հրեշտոր ուժիկները:

Բայց այնու ամենայնիւ դա էլ միմիայն լական երեւոյթ է թէ հայերը հասկացել են, որ եթէ խմբագիրը կարող է համ իր աշխատանքը, համ էլ իր հազարները տալ ազգային թերթը պահանջները համար, հասարակութիւնը կարող է թեթեւացնել խմբագրի դեմքից, մի քանի ռուբլ աւելի տալով և այդ աւելորդ ռուբլիներն միջոցով տարածել տալ թերթը ազգային դպրոցներին, ընթերցարաններին, չքաւոր աշակերտներին, ուսուցիչներին, կամ ուսանողներին մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Գեղեցիկների 6-ին

Ամսիս մէկին քաղաքային վարչութեան նիստը կայացաւ մօտ 35 իրաւասունների ներկայութիւնով: Ամենապատիւ ինքնը որ պիտի լուծվէր այդ նիստում, քաղաքագլխին էր վերաբերում և վարչութեան մի անդամի ընտրութեան: Պ. պ. իրաւասունները երկու անգամ խեղճ Վ. Բարաշնեա-

յետն, Փերոս, Պիրա, Լիւզիֆէր և Արէս մօրը լուսարեւը, ամառվան ներկայացուցիչներն են Վէնչա լուսարեւը, Իրիս, Հերա, Արտեմիս, Երեւոյն (Vespero), Սատուրնոս, Հերմէս, Ալանն են Պան, Պոսէյտ, Կիտերէ, Կիրէյէ, Քլորիս. Զըւ-ռանն են Իօթոն, Բորէաս, Պոսիդոն, Թէտիս: Մի-փոքրիկ երկնագունդը ներկայացնում է համաստեղութիւնները: Թովմաս իր գործի տակ դնել և տալիս պարսկերէն գրով Զիհան-բէյան (Աշխարհայայտութիւն, Աշխարհացոյց): Այդ գործի հեղինակները հրատարակել էին նոյնպէս մի բանալի տափաքնովին: Յիշեալ քարտէզը հայերէն փորագրված առաջին քարտէզն է, գուցէ և ամենագեղեցիկը կամ ճոխը:

Յիշեալ փորագրողներն յիշատակելէն վերջը, Հ. Ղևնդը արդարութիւն է համարում «չը մոռանալ Հաճի-Քալիֆա համրատարութիւնը թուրք աշխարհագրի թուրքերէն քարտէզի հայ քաջ փորագրողին (Թալան 1728, Կ. Պոլսում) որի անունը հայերէն վրում է մեզ Թուրքիայի թուրքական Նամակախ-ներին մէջ, ուր սա անում է թէ ինչն ուսումնասիրում է «Գալթիացի Մկրտիչի ձեռքով նորոթեալ փորված մի տափակ կիսագնդի քարտէզը»:

Ամստերդամի քարտէզէն վերջը, Հ. Ղևնդը մասնաձեռն է անում Վենետիկի Միսիթարեան հայերի այդ տեսակ աշխատութիւնները, Միսիթարեան Աբրալից սկսած (1746) մինչև մեր օրերը, հայկական և այլ աշխարհների դասագրան քարտէզներն և մեծ ու փոքր Ատլանները. Վիլհելմի Մե-լիթարեանց Ատլանը, նրանց փոքր գունդը, և գեղեցիկ երկրագունդը՝ երկու ոտք տրամադրով: Այս ծանրաբանական աշխատութիւնները թուրք 30 են եղել, մեծ ու փոքր. բոլորն էլ Հայկական Հանդէսում գետնորդած:

Հասնելով այն վաստակներին որոնք ընծայված են «Կիսերկնային նոր արուեստի» (լուսանկարութեան) ձեռքով, որը բազում երկիրների համար «եթէ աշխարհագրութեան մեծ օժանդակ է եղել, կարող է մերթնին համար նախախնամական ա-

նին սեպտեմբեր յետոյ՝ երրորդ անգամն ընտրելին նորան վարչութեան անդամ: Թէ ինչ փոփոխութիւն եղաւ մի ամսուայ ընթացքում մեր իրաւասունների համոզման մէջ, որ իրանց անպիտան համարածին՝ կրկին պիտանի համարեցին և կամ թէ ինչ երեսով և ինչից ստիպված պ. Բարաշնեանը համաձայնեց՝ այն ծանր ապտակներն ուսուցող վիճի, վերստին ընդունել անդամութեան պաշտօնը՝ այդ ամենը մեզ աչքիս չը դարձաւ: Պարան դարձաւ մեզ հետեւալ հանգամանքը: Բացի այն իրաւասուններից, որոնք պ. քաղաքագլխի մօտիկ ազգականներն են, միւս բոլոր իրաւասունները, թէ հայ և թէ թուրք, քաղաքային վարչութիւնը բացվելու օրից սկսած ամեն դէպքում և ամեն տեղում քաղաքագլխի վրա խօսք լինելիս՝ միշտ անբաւականութիւն էին յայտնում, միշտ մեղադրում ու դատաւարարում էին նրան, համարելով նրան միանգամայն անընդունելի իր պաշտօնին և համարեա թէ տարաբաղդութիւն էին համարում քաղաքի համար, որ այդպիսի դերուս ունի: Պ. պ. իրաւասունները մի այդպիսի համոզմունք թէ և ունէին դէպի քաղաքագլխի բայց մի տեսակ խոհեմութիւն էին համարում սպասել մինչև որ պ. քաղաքագլխի չորս տարուց ուժիկ ստացած լինի քաղաքից, որպէս զի դրանով օրէնքի նշանակած 4 տարին լրացած համարեն և նոր քաղաքագլխին ընտրեն: Պ. նահանգապետը տեղեկանալով իրաւասունների տրամադրութեան հարցմունքը արաւ դիտարկ կառավարութիւնից թէ արդե՞ք քաղաքագլխի չորս տարին՝ որ օրից պէտք է հաշուել. ուժիկ ստանալու օրից, թէ վարչութեան բացվելու օրից: Ստացած պատասխանը եղաւ վերջին պարբերութեան մտքով: Այն ժամանակ մտածեցին մեր իրաւասունները դիմել ուրիշ միջոցի: Իրաւասուն Վ. աս. Երեւոյնից, որ քննէ պ. քաղաքագլխի իր պաշտօնում մնալու կամ չը մնալու հարցը: Սպասվում էր որ խորհուրդը կը վճռէ քաղաքագլխի հարցը այն մտքով որ կառավարութիւնից իբրեւ չորս: Ինչպէս նոր քաղաքագլխին ընտրելու թույլտւութիւն, Քուլթայի օրինակով: Պ. քաղաքագլխի իրաւասունի տուած գրաւոր յայտարարութիւնը երկար ժամանակ, ամիսներով պահելուց յետոյ՝ ի վերջոյ ամսուայ մէկին առաջարկեց խորհուրդին: Խորհուրդը ինչպէս ասացինք, 35 իրաւասուններից էր կայանում: Պ. Երեւոյնից, որ ինքնուրու է պ. քաղաքագլխին, որ նախագահութիւնը յանձնէ իր տեղապահին և ինքը բացակայի, քանի որ հարցը վերաբերում է իրան. պ. քա-

տուել, որովհետեւ նրանով փրկվում են և թղթի վրա պահպանվում իր հին յիշատակարանները, որոնք երեսի վրա թողված, օրաուր կորցնում ու կորցնում են, հետգնեց անելի, իրենց բնա-յատուկ կերպարանները և նոյն իսկ գոյութիւնը, դալով այդ վատասկներին, Հ. Ղևնդը ցոյց է տալիս մի մեծ պլանով, ուր բացի նկարներէ և ստամ-պաներէ, պարունակում էր բազմաթիւ լուսանկար-չական տեսարաններ, մասամբ մի ուսու արուեստագետի (Նրմալով) աշխատութիւն, մասամբ էլ ազգային արուեստագետների, որոնց մէջ «առան-ձին նշանակութիւն է վայելում» Յովհ. Քիւրք-ձեանը, որը «անբաւ գոհարեութեամբ ու աշխատանքով հանել է բազում հարկաւորները մեր Աշխարհակեր քաղաքի (Città dolente), մեր Բագրա-տունի թաղաւորների Ժ. դարու մայրաքաղաքի տեսարաններէն»: Հայկական հանդիսում փայլում էր ուրեմն մեր քաջ արուեստագետի ծառայութեան հաւաքածուն, մի յիսնակ:

Մեր անահանուն բանաստեղծը, նա որ երբում է բոլորեցված սրտով իր հայրենի գետակն Հրազդան, նա որ, մեր գալիք նորադէպ բաղնիք ծիծեռնակ, երգում է, լուղի սրտի խորերը մի անհուն սիրայ հրաբուխ գարթեցնող ձայնով, «Հայ-յոց աշխարհիկ, Գարունդ է հասել», նա, որ վերջապէս աշխարհագրողը չանթի նման գոռացնում է անգլին Աւաղ Մասիսը, մեր այդ անհման հայ-րենագէտը, որ մեր պարանքը, մեր փառքը, մեր համարձակութիւնը կարող է համարուել, և մի նոյն ժամանակ մեր խեղճութեան, մեր հասա-չանքի ոգիւն և գիտաբան թաղանթի, փակում է խորանի և մեղանաղձիկ ձայնով իր հմտակց ձառը, իր հայրենիքին, եթէ կարելի է ասել, ջա-տագովութիւնը:

«Այդ, ի նկատի առնելով, որ աշխարհագրա-կան գիտութեանը վերաբերեալ քարտէզներ, մաս-պաներ, լուսանկարների և գրքերի այս որպէս և է ժողովածուն բովանդակում է այդ ազգ երկասի-րութեան թէ և մեծագոյն մասը բայց ոչ ամբողջ

դպրագլխի մերժում է այդ առաջարկութիւնը և նախագահում է ինքը: Պ. Երեւոյնից, որ բացա-տրելով խորհուրդին իր դիմացման չարժանութիւնը, նը-պատակել և կարեւորութիւնը, խնդրում է որ դադար-իւր քուլթայի վիճի սրով: Պ. քաղաքա-գլխի դրան էլ չէ համաձայնում և առաջարկում է, որ բաց ձայնով վճիւր տրվի և համարեա թէ հարցն այսպէս է դնում: «Եւ որ չէ կամենում որ ևս քաղաքագլխի մնամ, տեղիքը վերկենայ»: Ա-մենք էլ իրար մօտիկ տալով, մնում են նստած և սրանով ոչնչանում է Երեւոյնիցի առաջարկու-թիւնը և պ. Ղորդանեանը մնում է քաղաքագլխի:

Ընթերցողը կը հարցնէ. ինչո՞ւ պ. Ղորդանեանը չը կամենաւ օրէնքի ցոյց տուած կերպով վարվել. ինչո՞ւ նախագահութիւնը չը յանձնեց իր տեղա-պահին. ինչո՞ւ վճիւր դադարի քուլթի չենթարկեց...: Ահա թէ ինչո՞ւ: Պ. Ղորդանեանը թէ անձամբ և թէ իր ազգականների ու մերձակոյների ձեռքով ամեն միջոց գործ էր դրել և իրաւասունների մեծա-գոյն մասից խօսք առել որ իր օգտին խօսեն. բայց մի և նոյն ժամանակ համոզված լինելով որ խօսք տուց իրաւասունները կը խաբէն իրան և կը սեպեն, այդ միակ պատճառով այնպէս վարվեց: Եւ շատ լաւ արաւ, մեր կարծեւոր. որովհետեւ ա-տու է. «զինսրդն օժտանաւ» իմանալ գեալը: «...անհատային վրէժիկները կը լինի անհոգին միայն: Այն իրաւասունները, որ ամեն տեղ գո-ռում էին թէ լաւ, ընդունակ և բարեխղճ մար-դիկ չեն համաձայնվում վարչութեան անդամ լինել ներկայ քաղաքագլխին հետ ծառայելու իրանց ան-պատուութիւն համարելով և թէ պէտք է անպատ-ճառ հեռացնել իր պաշտօնից նոյն իսկ քաղաքա-գլխին, մի և նոյն իրաւասունները՝ առանց ամա-չելու իրանց ասածներով, առանց պատկաւելու ժողովրդից՝ ձայն տուին յօգուտ Ղորդանեանի և դրանով ապացուցին որ պ. Ղորդանեանը բոլորու-վին համապատասխան է իր պաշտօնին և միայն իրանք են եղել անխելճ ու անամօթ, որ մարդին ի դուր տեղը բամբասելով, հաւատարմ էին հո-գի հետ և իրանց բաժնաւորներով, ժողովրդի սիրտը պաղեցնում և անտարբեր կացուցանում դէպի գործադիր վարչութիւնը: Ամբթ վատերկին:

Նորայր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքների ուսու լրագիրները հաղորդում են որ խարկովի և Կիսիկի թատրոններին թոյլ է

հայկական արդիւնաբերութիւնը վերջին մէկ ու կէս դարում, որ յաջորդել է էլի մէկ ուրիշ մէկ ու կէս հաւասարապէս տաժանալից դարի, մեր երկրի վրա թուրքական ու պարսկական բանակ-ները շատ սուղ իրար հետ բախուելու երեսից, և վերջապէս այս դարում էլ ուսական բանակների նրանց հետ բախումներից (որոնք չորս կամ հինգ արագ հարուածներով իրեցին առաջիններից ոչ փոքր մաս այդ երկրից). ի նկատի առնելով այն համարեա շարունակ աւերումները որ գործվում է լաւ չը տանձված և յափշտակասելը ցեղերէն, շո-ղորդութիւն եւ յուսում թէ այդ խեղճուկ հայ ժո-ղովուրդը կարծածանայ կարեկցութեան եթէ նը-րան չաջողութեամբ, այդքան վրա թափված տա-ւապանների միջով, աւելի լաւ մշակել աշխարհ-հայրական ուսումը, նա մանաւանդ իր երկրինը որը մի օր հաւանականաբար աւելի բազմաթիւ համայնքներ կամ գիւղեր էր հանում իր ծոցում քան այսօրվայ բազմաթողովուրդ խառնվան, և որոնցից հիմա հալու մնացած կան 5,000 աղքա-յին յատուկ անուաններ, այլազգաբար կոչուները մի կողմ թողնելով. բայց վանդապանութիւնն և բարբարոսութիւնը, վեց դարերէ հետէ ի գործ գրված և դու այսօր էլ ուժի մէջ, բնաջնջ անե-լով իւրաքանչիւր օր նրա մեծաղին յիշատակնե-րէն մէկնումէլը և քերելով իւրաքանչիւր տարի այն նուիրական ու սիրելի հայրենի անուաններէ մէկնումէլը, մեզ երկիւղ է ազդում եթէ այդ դեմքը չը փոխուի վաղվաւ այդ կերպը մի երկրի հետ, որը, ինչ էլ որ պատահի, պիտի չու-րանայ երբեք իր նախնական ավուրութիւնը, և ոչ էլ մոռանայ իր արժանիքները ինչպիսի էլ որ լինի սրանք, թէ մի գուցէ քիչ վերջը փոխանա-հայկական աշխարհագրութեան, գրուի նրա՝ Ա-րագրութիւնը (Erimografia):»

Ա. Մ. Ե. Պ.

տրված դեռ ընդ վրա փոքր-ուսական լեզուով պիտի սանկերը: Առաջվայ ժամանակներում փոքր-ուսական բարբառով բեմական գրուածները արգելւած էին:

Լսում ենք որ Էջմիածինը վաւերացրել է լինել ընդհանուր հայոց ուսուցչական ժողովի պատրաստական յանձնարարից մշակված պրոգրամը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՅԻՑ

Կ. Պօլիս, 28 նոյեմբերի

Դատաւարութեամբ եմ գրուց դեռ երկար ասն բանտային կեանքը անցնել, որ վիճակված է հիւանդին, բայց դո՛ւ եմ բարեկամներէս, որոնք միշտ յանձնարում են ինձ և տեղեակ պահում օրվայ բոլոր անցքերին: Այդ անցքերի մէջ ի հարկէ ամենից պիտաւորը պատրիարքի հրաժարականի խնդիրն է: Ամսիս 26-ին աղբյւրն ժողովի մէջ հիստ է կայանում Ներսէսի տուած հրաժարականը ընդունելու: Կամ չընդունելու համար պիտի ասած ձեզ, որ թէպէտ այդ ժողովի երեսփոխաններ թիւը ցուցակի մէջ 140 է, բայց իսկութեան մէջ միշտ ոչ աւելի է քան 70—80, որոնց նիստերին ներկայ գտնուողները, որչափ էլ չարտասուվոր է լինեն ասն նիստերը, սովորականաբար 25—30 մարդից աւելի չեն լինում: Վասնորոյ պիտի էլ հասկացած թէ ինչ կարևորութիւն է ստացած Ներսէսի հրաժարականը, երբ նորա պատճառաւ նոյեմբերի 26-ին ներկայ են գտնվում ամբողջութեամբ 80 հոգի երեսփոխաններ, այդ դեռ հերքել չէ, այլ գալիս են նոյնպէս բազմաթիւ կանայք և օրիորդներ իրանց ազգի հովուի հրաժարականի դէմ բողոքելու, եթէ միայն ընդունվելու լինի ժողովից այդ հրաժարականը: Նրոյն երեսփոխան միայն բացակայ են գտնվում: Ղարա են Ստեփան Գալստիան և Քրիստոսապետը, այս երկու վատ տոնէսները առաւելոց ազդարարվում են, որ կատաղի ժողովուրդը վրէժնորքի պիտի լինի իրանց եթէ նորա աչքին ուր և ինչ երևան այդ օրը:

Բացվում է նիստը, հէնց սկսվում են վիճարանութիւններ, յանկարծ ներս է գալիս ամենայն բուռնութեամբ և կարգապահութեամբ խուռ բաղձնութիւնը գաւառական հայերի, որոնք ներկայացուցիչներ են ուղարկվում մօտ հարկու հազար հոգի գաւառացիներին կողմից, որ չը թողնեն Ներսէսի հրաժարականի ընդունվելը, որովհետեւ հակառակ դէպքում գաւառացիները որչափ են տանել խառնեց մի կողմ և ընկել նորա մէջ Ներսէսին իրանց ուսերի վրա բերել պատրիարքարան, որ շարունակէ նա այնտեղ իր զբաղմունքները ազգային գործունէութեան մէջ:

Երեսփոխանները և բոլոր ներկայ գտնվողները իսկիցն քննադատում են բողոքի ծանրութիւնը, վաւերորոյ արտատրոփ սպասում են եկաւորներին խօսքին: Այդ ժամանակ յայտնի դէպքերից դուրս Զարուկիան Չաքրեան կանգնում է եկած խմբից մէկի առաջ և դարձեալ առանց չընջջոյի բաց է անում մի թուղթ, որի երկարութիւնը տասը կանգուն է լինում: Այդ բազմածալ թուղթը իսպառ սեղրած է լինում մօտ ինը հազար ստորագրութեամբ գաւառացիներին, որոնց մէջ ամենից առաջ լինում է իրան Զարուկիան Չաքրեանի անունը: Այդ ծրարից յետ բացվում են միւս ծրարներ վեց, եօթը, ութ հազար ստորագրութիւններով և երբ բոլորը փոխվում են ժողովի մէջ, գաւառացի խուռ բազմութիւնը աղաղակում է. «Էկցեց Ներսէս պատրիարք, պատրիարք մշտական և անփոփոխ»: Այդ ձայների հետ խառնվում են կանանց և օրիորդների ձայները, որից յետ Ներսէսի դէմ որոյալթ լարող Մեղեմ-Գուրի, Բեգման, Եւսեմ-Ֆեան և ուրիշ խորաբոս երեսփոխաններ, իսկոյն փոխելով տունը, քուէ են տալիս թէ, Կ. Պօլիս հայոց ազգային ժողովը չէ կարող ընդունել Ներսէս պատրիարքի հրաժարականը վասն զի, վասն զի և մի քանի էլ վասն զի ներքին Ներսէսի արժանատրութիւնները մէջ բերելու համար: Այսպիսով երբ մի կողմից Կ. Պօլիս «մեծահանձար գրագէտները», «պատմագէտները» և «ազգասէները» ազգի ամենամեծ ճգնաժամի մէջ պատրիարքի դէմ անհանդիման փորձելով ուղղութիւն կործանել նորան և նորա հետ է հայոց հարցը, Կ. Պօլիս

մէջ միշտ երեսից ընկած խեղճ «խմբուհներ» հայրենասիրութեան և անուղիծեան դիւցազներ են ներկայանում: Թող չը վշտանայ շատերի «հայրենասիրութեան» գորովակից սիրտը. HE BCE TO БЛЕСТИТЬ, ЧТО ЗОЛОТО...

Հիմա մնացել է հարցը միայն նրա մէջ թէ Ներսէսի հրաժարականը պիտի ստորագրէ ինքը սուլվածք թէ ոչ, որովհետեւ չը նայելով ազգի ամենաջերմ ցանկութեան չը բաժանվել իրանց սիրած պատրիարքից, դարձեալ սուլվածք կարող է հրաժարեցնել պատրիարքը, երբ նա իր հրաժարականը տուել է այս անգամ ուղղակի կառավարութեանը: Բայց այս կողմից էլ շատ ուրախակի լուր կարգացի այս վայրկեան ինձ մօտ «Phare du Bosphore» թարմ համարի մէջ, որտեղ ասվում էր թէ մեծ վիզիլը հրաւերագիր է ուղարկել հայոց պատրիարքին իր մօտ գալ կարևոր գործի վրա խօսելու համար: Երևում էր որ կառավարութիւնը տեսաւ մայրաքաղաքի հայերի խլրտուանքը և որոշեց չընդունել հայոց պատրիարքի հրաժարականը: Անձ նիմայ է որ գաւառացի հայերի պատրաստած այսպիսի մի ամուր հողի վրա կանգնած, Ներսէս պիտի յամառվի իր հրաժարականը յետ առնելու մէջ կառավարութիւնից, մինչև որ չը տայ իր հաւանութիւնը այն ինչը կէտերի վրա, որոնցով պատճառաբանել էր պատրիարքը իր հրաժարականը և որոնց մասին անցեալները արդէն գրեցի ձեզ: Մեծ յոյս կայ, որ պատրիարքի արած այս դժանդատացիան կունենան իր արդիւնքը...

Մոռացա՞ծ ձեզ առել և այն հետաքրքիր լուրը, որ Կ. Պօլիս էֆէնդիներին և հարուստներին մի խումբ երէկ դնացել են խառնեց պատրիարքի մօտ խնդրելու նրան, որ չը հրաժարվի իր պաշտօնից, որի մէջ այսուհետեւ խոստանում են օգնել նրան աւելնայն նիւթակաւ ոգնութի իւննիւրով: Անձ այսպէս են սղք և այսպէս է սոցա ազգասիրութիւնը, երբ պատրիարքը ներքին ընկած չը գիտէր ճշտելից իր պատրաստը անգամ հայկթայթէր, այդ ժամանակ ոչ զք չէ մօտնուում նրան, կարծելով թէ նա մի ընկած մարդ է, որը էլ ոչ մի կողմից խրախոյս չէ կարող գտնել իր «երեսկայական» հայկական հարցը վախճանին հասցնելու համար, իսկ երբ տեսան թէ այսպիսի դրդիւններ ընկաւ այդ «ընկած» և «անօգնական» մարդի համար, երբ տեսան եւրօպական դեսպաններին, թղթակցներին այդչափ պարագլխիւն այդ «ընկած» և «անօգնական» մարդով, երբ տեսան մասնաւոր նոյն իսկ իրան թիւրքիայի կառավարութիւնը մեծ տարակուսանքի մէջ Ներսէսի հրաժարականի պատճառաւ, այդ ժամանակ էֆէնդիները մէջքը երկու թեքելով գալիս են Ներսէսի ոտները ընկնում հարկու ու մէկ շողքորթութիւններ անելով:

Այսօր Կ. Պօլիս հայ և ֆրանսիական լրագիրներին մէջ յայտարարութիւն տպվեց, որ մի երկուստաբար յոյն բժիշկ պիտի դասախօսութիւն անել վաղը յայտնի «Ալլոգոս» ասված ժողովարանում հայոց գրականութեան ծագման վրա «Histoire de l'origine de la litterature armenienne» անունով: Առաջին անգամ է մի այսպիսի հաճելի սկիւզըրդ տրվում ինքնահաւան յունաց կողմից հայ երկրաստարութեան, վաւերորոյ ոչ թէ անկողնի մէջ, այլ ևս դազաղի մէջ էլ սղակած լինեմ, մի տաղիր եմ անշուշտ ներկայ գտնվել վաղը այդ դասախօսութեան, հայասէր երկրաստարդ յոյնի ձեռքը շնորակալութեամբ սեղմելու համար ուսանայ երկրաստարութեան կողմից: Բայց չը լինի թէ այս մասին էլ տրանշլեն ինձ դէմ ձեռ մի «հայրենասէր» լրագրի համախոսները «ո՞վ է նորան իրաւունք տուել մեր կողմից շնորակալութիւն յայտնելու» ասելով...

Գրիգոր Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՅԻՑ

Զէյթուն, 1 նոյեմբերի

Զաճախ Մեծ ու Փոքր Հայաստանէն թղթակցութիւնք, տեղեկագրութիւնք և վիճակագրութիւնք կը հրատարակուին ազգային և օտար թերթերու միջոցաւ: Իսկ ի կիլիկիոյ դուռ ուրեք աննշան համակարգութիւնք տեղի կունենան, շատ անգամ թիւր տեղեկութեամբ, և ընդհանրապէս բողոքական միախմբաբաց և Այնթափի Քօլէժին վրայով: յառաջագործութեան և զարգացման պէտք ունի, թէ կը պակսին անդ օրինաւոր և ձեռնահաս ա-

ռաջնորդներ, սահմանադրապէս հաստատակ ժողովներ, եւրօպական զարոյցներ, երած անձնուէր հայ մասնագէտներ, ազգային կրթական հաստատութիւններ: Թէ հարկ է հայկական յատուկ դրուժով և եւրօպական քաղաքակրթութեամբ անոր տնտեսական ու բարոյական վերքերը բուժել, հարկ է մասնաւոր պատուիրակներու ձեռք խիստ քննել այս ժողովրդեան քաղաքութեան պատճառները, անոր վարքը ու բարքը, առաքելութիւնն, ինչպէս և զեղծմանց շարժառիթները, առաջին անուր կրօնափոխութեան արշաւանաց՝ որ անդիմադրելի կը դառնայ հետզհետէ, ի մասնաւորի եկեղեցականաց ապիկարութեան պատճառաւ և ո՞վ գաղափար ունի այս հոգևորականաց վիճակի վրայ:

Պօլս ընկերութեան չնորհիւ միախմբաբաց այսօր կիլիկիոյ ամենէ նշանաւոր և աննշան քաղաքներու ու գիւղերու մէջ մեծ և փոքր երկսեռ վարժարաններ ունեն, որոցմէ երած միախմբաբաց միջոցաւ սաները, ոչ միայն հայկական սիրան ու զրացումը կը վերաւորեն, այլ և մեր ամենաւաւերական հաստատութիւնները իբրեւ անհաւատ ու թիւ և ան վայր կը նկատեն ու կը հուշակեն: Համբաւ ստացած պատուելիներէն մին, հանդիսաւոր օր մը ի Մարաշ բիւրաւոր ունիւրաց առջև, յանդիման է ըսելու թէ «Անհաւատութիւնը կործանեց միայն» Դաւիթաբեկան վարժարանը, և այլն: Ինչպէս որ կը վարուին բողոքական, անոնցմէ տասնապատիկ աւելի վատութեամբ լատինք և լատինացեալ հայ կրթօրէիք հայկական կենսական տարեկց կը սպառնան: Արդէն մայրենի լեզու և հայրենի տարեկց տեղ տեղ ի վաղուց կորսուած են, ընտաղով և եկեղեցիով միայն հայ են նոքա:

Մենք կը բերկրիմք կիլիկիոյ հին և սկիւրալի աւերակաց վրայ. ճոխ յիշատակարաններով լի աշխարհ մ'է նա կը գոչեմ, երկրագործութեան, վաճառականութեան և ամեն տեսակ արտադրութեանց յարմարագոյն և քանչև ի դիմաւ մ'ունի, և այլն, բայց անորմէ երբ անոր կիսաւեր ու անքաղաք վաճեղքը բարեկարգելու հայոց ամայի դաշտերը, ընդարձակ և հովաստե բարձրաւանդակութիւնները անշալի, իսկ հովիտներն ու հանքաշատ լեռները տակաւ առ տակաւ գաղթականաց և աւազակ չեղքեցնելու որջեր կը դառնան: Որի ձեռքով քննուած են խեղճ կեանքաւորացի հայոց կեանքն ու կացութիւնը, բազմաթիւ փայտացի քաջարիւն հայոց յատուկութիւնները, Ազանայի անուարական կարեւորութիւնը, Ալեքիւի, Մարաշի և այլ տեղերու հայոց ճարտարութիւնը, Զէյթունի և Հաճնոյ տեղական անձկութիւնը և վերջապէս մի շատ տեղերու ճնշման և հարստահարութեան անհանդուրժելի տոկոսութիւնը:

Աշխարհ գիտէ թէ Դաւիթաբեկան վարժարանը կիլիկիոյ բուռնութեան համար կտակուած էր անմահ բարեբարքէն, արգարեւ այս բուռն տաճարը սոյն երկրին ընծայած է աշխիւ պարգևներ, որք խնայար դիմելով ու լոգնել մտօք կաշխատեն ուսուցչութեամբ՝ չնորհիւ Դատարարական ընկերութեանց, սակայն նոքա միայն կարող են երկրին վերքերը մերկապարանոց ցուցնել հասարակութեան: Միացեալ ընկերութեանց արդի անօրէն խորհուրդը կը ջանար և պիտի ջանայ նոր սերունդը հաւաքելով զօրացնել և գրագէտը ունեւր կիլիկիոյ դատին փաստաբան կը կանգնէին հեռատես մտօք և արթնուն աչքը, բայց ներքու միջ հարցնել թէ ազգը ինչ նիւթական և բարոյական ձեռնարկներ ըրաւ այս ժողովրդեան բարեկեցութեան համար, միթէ կաթողիկոսական խիստ քննադատութիւնք այս յետմնաց ժողովրդեան հաստատաւորութեան վրայ նոր ոչ մի պիտի աւելացնէին... ոչ ապաքն դատարան մարդոցսց հային իւր քսել էր այս: Զաւալի է յայտնել թէ բովանդակ հայոց ազգի ցանկալի կիլիկիան անտես մնացած կը թուի այսպիսի կարեւորագոյն պարագաներու մէջ իսկ և ոչ նուազ ցաւ է կիլիկիոց անտարբերութիւնը այս առթիւ: Միթէ յօրուածագրեր կը պակսին անդ, եթէ պատրիարքարան և վարչութեան տեղեկագրեր սուղ չեն գտնուիր:

Ներսէս վարաժնուհի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Journal d' Orient» լրագրին հաղորդում են Կ. Պօլսից որ դեսպանները ընդգծ են Մուխթար փաշայի Հայաստան ուղարկելուն, բարենորոգումներ իրագործելու համար: Մուխթար փաշայի ան-

ցեալը վկայում է նրա համալուծեան, նրա ֆանատիկութեան և դէպի քրիստոնեաները նրա ունեցած ատելութեան մասին:

«Մախի» լրագրում կարդում ենք հետեւեալը: «Ս. Պատրիարք հօր հրաժարման լուրը գաւառաց մէջ ևս արձագանք գտնելով, հեռագիրներ սկսած են գալ, որք նորին սրբազնութեան հրաժարականն ընդունելու անհաւարութեան վրա կը պնդեն»:

«Ունգարական պատգամաւորների ժողովի նիստերից մէկի ժամանակ պատգամաւորներից մէկը մինիստր Տիսային խաբարայ անուանեց: Ասում են, որ մինիստրը թողաւտութիւն է խնդրել աւստրիական կայսրից միանամարտել այդ պատգամաւորի հետ: Հաւատացնում են, որ աւելի խիստ կանօններ կընդունվեն ժողովի վիճարանութիւնները կարգադրելու համար: Մինիստր Տիսա յայտնեց, որ նա ընդգէմ է պարլամենտական վիճարանութիւնների ազատութիւնը սահմանափակելու: Նրա կարծիքով, ժողովի նախագահին այդ պիտի իրաւունքների տալը շատ փնասակար է: Տիսայի այդ կարծիքները համակրութեամբ ընդունվեցան»:

«Վանից մեզ գրում են, որ Վասպուրականի նահանգը անդադար գալիս են նոր զօրերը: Զինուորականներին բնակեցնում են ամբողջ նահանգի հայ գիւղերի աներում, որոնք տախլած են պահել և կերակրել զինուորականներին անվարձ: Ուրեմն բացի արդէն երած ծանր հարկերից, հայ ազգաբնակչութիւնը վճարում է և այդ ծանր հարկը պահելով իր հաշով թիւրք զինուորականներին»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԻԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 դեկտեմբերի: «Прав. Вѣстн.» հաղորդում է որ վարչապետ Սուրբ Խաչի եկեղեցում մեռել են 28 հոգի, քննակել են 26: Զարգործութեան նպատակն էր գործութիւնը: Ազգաբնակչութիւնը կասկածում է հրէաներին և յայտնվում է մի խիստ յուզում քաղաքի հեռաւոր թաղերում: Ամբողջ կոտորեց մի քանի զինեաներ, խանութներ և տներ: Կարգը վերականգնեցրած է 14 դեկտեմբերի: Անկարգութիւնները վերանորոգվեցան դէպի դիւրը: Կրկին կարգը վերականգնեցրած է և շատերը կալանաւորված են:

ՕԴԵՍՍ, 15 դեկտեմբերի: Որովհետեւ ուսուցաց թատրոնի տեղը հրաժարվել է կատարել տեխնիկական յանձնաժողովի պահանջները, փոխվելութիւններ անելով թատրոնի մէջ, այդ պատճառով քաղաքապետի հրամանով երէկվայ օրից ներկայացումները արգելված են այդ թատրոնում: Քաղաքը մնացել է առանց թատրոնների: Արտիստների դրուժութիւնը շատ դժուար է: Լրագիրները հաղորդում են 16 դեկտեմբերից, որ զեղծում ենք Տաքանբոգի մաքսատան մէջ շատ խուռ են, օրինակի համար վաճառականներից մին չը վճարեց 460,000 ռուբլ մաքսային հարկ: Ծառայողները հեռացրած են գործից: Գտնվում են պակասութիւններ և արդարապատուութեան միախառնութեան վարչութեան գործերում: Վերացված է այն օրէքը որով արգելվում էր որդեգրել սեփական անհաւրադատ երեխաներին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 դեկտեմբերի: Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ռ. 50 Կ., երկրորդ 90 ռ. 50 Կ., երրորդ 91 ռ., չորրորդ 90 ռ. 25 Կ., հինգերորդ 90 ռ. 37 Կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ռ. 50 Կ., երկրորդ 215 ռ. 50 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ. 25 Կ., երկրորդ 90 ռ., երրորդ 90 ռ. 12 Կ., ոսկի 7 ռ. 83 Կ.: Ռուսաց 1 ռուբլ 1օնգոն վրա արժէ 25,28 պէնս, 100 ռ. Համբուրգի վրա 215 մարկ 25 պֆ.: Բօրայի արամադրութիւնը հանգեաւ է:

Խաբարներ—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Դուրս եկա մամուլի տալիք Սեդրակ Մանգինեանի հետեւեալ աշխատութիւնը. «ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ»⁶. Եղեալան դպրոցները Զորքորդ տարուայ դասընկացք եւ միանգամայն Ա. Բ. եւ Վ. տարիները համար հրահանգէ վաճառվում եւ բացառապէս «կենտրոնական դրախտութեամբ»⁷ գին եւ 75 կոպէկ: